

Վա՛յ, էս ի՞նչ են ասում:  
Էս ի՞նչ է կատարվում  
աշխարհում:

# Զարթ ի տրեւոյցներ ընկերակիւններին



OSIAF-Armenia

Հովանավոր՝ Բաց հասարակության ինստիտուտի  
օժանդակության հիմնադրամ - Հայաստան

2003




Աշխարհում տարեկան  
330.000.000 մարդ,  
օրական  
1.000.000 մարդ  
դառնում է  
սեռավարակների գոհ:  
Յուրաքանչյուր օր  
6.000 մարդ  
վարակվում է  
ՄԻԱՎ-ով:  
Հայաստանում  
արդեն 250 մարդ  
վարակվել է ՄԻԱՎ-ով:



Ասում են, որ  
սեռավարակներն ու ՄՊԻԴ-ը  
շատ տարածված են:  
Կարո՞ղ է մենք էլ մի օր  
վարակվենք:

Ա՛յ միամիտ,  
վտանգը բոլորին է սպառնում:  
Իմ ծանոթներից մեկը, անտեղյակ  
լինելով՝ վարակվել է...




...Բժշկի չի դիմել...,  
հարևանի խորհրդով  
դեղեր է խմել... և հիմա  
շատ է ՏԱՌԱՊՈՒՄ



Գիտե՞ս, ինչպես  
են վարակվում:

Դե... լսել եմ,  
որ վարակվում են  
հիվանդին բարևելիս, նրա  
բաժակից օգտվելիս,  
համբուրվելիս... մոծակի  
խայթոցից կամ  
շան կծածից:



Ասածս լավ հիշի՛ր:  
Սեռավարակներն ու  
ՄՊԻԴ-ը ամենից հաճախ  
փոխանցվում են սեռական  
հարաբերության ժամանակ,  
ինչպես նաև հիվանդի  
օգտագործած ասեղների ու  
ներարկիչների միջոցով,  
վարակված արյան  
փոխներարկման դեպքում:  
Եվ ամենացավալին այն է, որ  
հիվանդ հղի կինը վարակում է իր  
դեռ չծնված երեխային: Իսկ մոծակի խայթոցից  
կամ շան կծածից այս վարակները չեն տարածվում:



Ի՞նչ սեռավարակներ կան



Սիֆիլիս, գոնորեա, տրիխոմոնիազ, նաև խլամիդիոզ, ՄԻԱՎ և այլ վարակներ:



Սեռավարակների ընդհանուր ախտանշաններն են՝ բոր, այրոց, ցավ միզելիս, արտադրուկներ հեշտուղի, վերքեր սեռական օրգանների վրա, ցանավորում մարմնի մաշկի վրա:

Բայց, դու կարող ես քեզ հանգիստ զգալ, եթե վարակից պաշտպանվելու համար օգտագործես պարզ և հուսալի մի միջոց՝ դա պահպանակն է:



Կարևոր է այն ճիշտ օգտագործել:



Ստուգիր պահպանակի պիտանիության ժամկետը: Եթե այն անցել է, ապա չի կարելի օգտագործել, կարող է պատռվել:




Չարժե միաժամանակ երկու կամ ավելի պահպանակ օգտագործել՝ մեծանում է պատռվելու վտանգը:



Պահպանակը այնպես հանիր փաթեթից, որ այն չպատռես երկար եղունգներով:

Ես գիտեմ, որ տղամարդիկ չեն սիրում պահպանակ օգտագործել՝ մեկին այն խանգարում է, մյուսի՝ հաճույքն է փչացնում...



Շնորհակալ եմ քեզանից: Երեկ կարողացա համոզել ընկերոջս, որ պահպանակը անհրաժեշտ է երկուսիս համար:

Ուրախ եմ, որ խորհուրդներս օգնեցին քեզ: Եթե միշտ պահպանակ օգտագործես և ունենաս մեկ զուգընկեր, Սեռավարակները ու ՄՊԻՂԸ քեզ չեն սպառնա:



Իսկ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող ես դիմել